## Ա.

*Գերապատիւ և Գերայարգ Տեառն Տեառն Աբրահամ Հօր մերոյ Ստեփանոս Վրդպ.ի բազում խոնարհութեամբ ողջոյն աչառաքերոյր*

... Թագաւորն յոյժ բարւոք վարի այժմ, և ամենեքին գովեն զիմաստութիւն նորա. միայն թէ նախչի աղան որ միշտ առ թագաւորին էր, և հանապազ բարեխառնէր զօրէնս և զհրամանս նորա, մեռաւ յաւուրս յայսոսիկ, և ամենեքին լացին զմահ նորա մանաւանդ հայք և յոյնք: Հացն էր եօթանասուն տրամն ստակ մի, և յաւուրս յայսոսիկ է 85, տրամն ստակ մի: Վէզիրն զհաճոյս թագաւորին չահել կամեցեալ զիրս եասախին հոգացաւ խստագոյն ևս պատուիրել. իսկ թագաւորն յաւուր միում յորժամ չրջէր ընդ քաղաքն ծպտեալ, զի՞նչ է այս ասէ ցվէզիրն զի ծառայք իմ կապկանման չրջին ընդ քաղաքն: Եւ անտի սակաւ մի ընդարձակեցաւ նաև ի կողմանէ եասախին: Ակնեցիք բողոք կալեալ առ թագաւորն վասն էմիրի միոջ վասն չարութեանց նորա, և առեալ ուտիկան ի թագաւորէն զթուռնաճի պաշին նորա, սպանանել ետուն զէմիրն. բայց յետոյ բազմութիւն էմիրներուն յարուցեալ ի ձեռն կնոջ միոյ լեզուագարի, որ իբրև մայր մեռելոյն անձամբ խօսէր յատենին, կալան զարս չորս երևելիս յակնեցւոց անտի որ ի կոստանդնուպօլիս, և գլխատեցին ի գուռն արքունի: Վէզիրն ի չրջիլն ծպտեալ ետ կշռել զմիսն զոր կին մի առեալ էր ի մսավաճառէն, և գտաւ կշիռն պակասեալ յօխայէն 15 տրամ. և ասաց ցկինն ցուցանել զկրպակ մսավաճառին. իսկ տէր կրպակին իրազեկ եղեալ խոյս ետ անտի. և եկեալ վէզիրն ի կրպակն եգիտ ի նմա մսավաճառ զթուրք մի երիտասարդ անձնեայ, և նա էր տարաշխարհիկ օտար նորոգ եկեալ ի կոստանդնուպօլիս, և մտեալ ի կրպակն իբրև խալֆայ. յայնժամ հրաման ետ վէզիրն կախել զնա ի կրպակի անդ իւրում վաղվաղակի, իսկ նա յերկիւղէն առժամայն անկաւ և մեռաւ: Վասն որոյ կախեցին զնա ըստ հրամանին արկեալ չուան ըստ անութ նորա: Կոստանիստ պատրիարգին ի վերայ քրթմնջիւն էր ի մէջ հայոց, և կաթուղիկոսն հրաման առաքեաց դնել կոստանդնուպօլիս զայլ ոմն իբրև նուիրակ իւր բաց ի պատրիարգէն, և էր ասեն յանուանէ նշանակեալ զաբրահամ վարդապետն զառաջնորդն իզմիրու. ընդդէմ կացին պատրիարգն և պատրիարգականք նորոգ նուիրակութեանն և նուիրակին այնմիկ. և խստացաւ բան պատրիարգականացն և ֆերմանով և չաւուշով վտարեցին և առաքեցին զաբրահամն որ ակն եղեալ էր պատրիարգութեան կոստանդնուպօլսի յերկիր և յաշխարհ իւր:...

Յամի տեառն 1764
Հոկտեմբերի 16
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա Ճամպազօղլու

## ՄԾԲ.

## Բ

*Գերաւեծար գերյարգելի Աբրահամ հօր մերոյ Տեառն Տեառն Ստեփանոսի վարդապետի ողջոյն*

Թղթ. ՃՂԴ

... Ցաւուրս յայսոսիկ հատին զգլուխս չորից ի յակնցոց՝ որոց ոմանք էին սառաքք, և ոմանք հացագործք. զերիս ևս զայլս ի յակնցոց խնդրէին սպանանել. բայց նոքա թագեան, և ոչ եկին ի ձեռս: Պատճառն սպանման սոցա էր այս, զի ի գաւառն ակնայ նախիպ (այսինքն գլխաւորն էմիրներու) ոմն ընդ ոմանց էմիրից բազում չարիս և վնասս հասուցանէր նոցա. զորոց իբրև աստ ի ստամպոլ ետու[ն] ակնցիք (գլխաւորքն այնք գլխատեալքն) արգուհալս թագաւորին. սա առաքեաց անդ զիւր թուռնաճի պաշին առ ի